



Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական արտենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հեղափոխական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:



<https://orcid.org/0000-0002-6883-455X>

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ

ՄՏԱՀՈԳԻՉ ՊԱՏԿԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-24

Հիմնաբառեր. աղքատության մակարդակ, եկամուտների անհավասարություն, սոցիալական բևեռացվածություն, աղքատության գիծ

Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն նպատակներից մեկը բնակչության տարբեր խավերի, հատկապես խոցելի խմբերի համար նյութական և ոչ նյութական բարիքների մատչելիության ապահովումն է: Այս առումով, աղքատության հաղթահարմանն ուղղված նպատակային քաղաքականությունը պահանջում է վերջնարդյունքների համակողմանի ուսումնասիրություն, որն առանցքային նշանակություն ունի իրականացվող քաղաքականության բացերի վերհանման, աղքատության դեմ պայքարի գործիքակազմի վերանայման, գերակայությունների հստակեցման և քաղաքականության խորացման հնարավորությունների բացահայտման տեսանկյունից: Հոդվածում փորձ է արվել կատարելու նմանօրինակ վերլուծություն աղքատության մակարդակը բնութագրող առանցքային ցուցանիշների հիման վրա: Վերլուծությունից պարզ է դառնում, որ եկամուտներն անհամաչափորեն են բաշխվում բնակչության տարբեր խմբերի միջև, և սոցիալական բևեռացվածությունը թույլ չի տալիս աղքատ բնակչությանն օգտվել տնտեսական աճի արդյունքներից: Երեխաների և ընտանիքի անդամների թվի ավելացումը սահմանափակում է նյութական կարիքների հասանելիությունը: Ավելին, նույնիսկ աշխատանքի շուկայում զբաղված բնակչությունը չի կարողանում հաղթահարել աղքատության շեմը և հոգալ իր կենսական պահանջմունքները:


Համաշխարհային տնտեսության օրակարգային մարտահրավերներից մեկը աղքատության վերացումն է, որի վրա է խարսխված տնտեսության կայուն զարգացման տեսլականը: Ըստ այդմ՝ աղ-

քառույթյան հաղթահարմանն ուղղված հասցեական քաղաքականության իրականացումը մշտապես եղել է ինչպես առանձին երկրների կառավարությունների, այնպես էլ միջազգային հեղինակավոր կառույցների ուշադրության առանցքում: ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից առաջինը բնակչության աղքատության վերացումն է, որի թիրախում մինչև 2030 թվականը աղքատամետ ռազմավարության իրագործմամբ ծայրահեղ աղքատության վերացումն է, սոցիալական տարբեր խմբերում աղքատության մակարդակի կրճատումը և խոցելի խմբերի դիմակայունության մակարդակի բարձրացումը¹:

Աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության նպատակայնության ապահովումը անխուսափելիորեն կապված է առաջնահերթությունների վերանայման, համահունչ գործիքակազմի ընտրության և հետևողականորեն դրա օգտագործման հետ, որոնք քաղաքա-

կանության արդյունքների պարբերաբար գնահատման անհրաժեշտություն են առաջացնում: Այս առումով, կարևոր նշանակություն է ձեռք բերում քաղաքականության արդյունքների գնահատման համար օգտագործվող աղքատության ցուցանիշների համալիր ուսումնասիրությունը:

Աղքատության չափման հիմնական չափանիշը Հայաստանում համարվում է Համաշխարհային բանկի² տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) 2019 թ. մեթոդաբանությունից բխող բացարձակ աղքատության ցուցանիշը՝ ըստ սպառման ագրեգացված ցուցանիշի³: 2023 թ. Հայաստանում աղքատության մակարդակը³ կազմել է 23,7%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1,1%, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են (գծապատկեր 1): Մինչդեռ աղքատության մակարդակն ըստ վերին գծի նախորդ տարվա 41,3%-ից աճել է մինչև 42,6%, որից բխում է, որ ավելի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1


Աղքատության մակարդակի ցուցանիշների փոփոխման միտումները, 2019- 2023 թթ.⁴

¹ Աղբյուրը՝ Կայուն զարգացման նպատակները Հայաստանում: Միավորված ազգերի կազմակերպություն, <https://armenia.un.org/hy/sdgs/1>

² Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 31-32, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf

³ Աղքատ են համարվել նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել ամսական 53590 ՀՀ դրամից (աղքատության միջին գծից), ծայրահեղ աղքատների դեպքում՝ 29786 դրամից (աղքատության պարենային գծից), չափավոր աղքատների դեպքում՝ 43036 ՀՀ դրամից (աղքատության ստորին գծից), իսկ աղքատության վերին գծի դեպքում՝ 64146 ՀՀ դրամից: Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 31, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf:

⁴ Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 34, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2_1.pdf, Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 31-32, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Աղքատության մակարդակն ըստ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դասում աղքատության միջազգային գծի («2025 թվականի ապրիլի դրությամբ օրական 6.85 ԱՄՆ դոլար), տոկոսը՝ բնակչության նկատմամբ, 2022 թ.⁵

շատ աղքատներ կենտրոնացած են աղքատության վերին մակարդակում⁶: Աղքատության վերին գծի և բնակչության դեցիլային խմբերի դրամական եկամուտների վերլուծությունից կարելի է նկատել, որ 5-րդ դեցիլային խմբի դրամական եկամուտների մակարդակը գրեթե համընկնում է աղքատության վերին գծի հետ, 6-րդ դեցիլային խմբի եկամուտները գերազանցում են դա 16,4%-ով, իսկ 7-րդ դեցիլային խմբի եկամուտները՝ 36,2%-ով: Սա վկայում է այն մասին, որ աղքատության վերին գծից բարձր եկամուտ ունեցող բնակչության կեսի եկամուտները բնակչության սահմանային շեմին մոտ են, և տնտեսական ցնցումների ի հայտ գալու պարագայում բնակչության այդ հատվածը կարող է հայտնվել աղքատության վերին գծից ներքև:

Համաձայն Համաշխարհային բանկի դասակարգմամբ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար հաշվարկվող աղքատության միջազգային գծի (որը 2025 թ.-ի ապրիլի դրությամբ սահմանված

է որպես օրական 6,85 ԱՄՆ դոլարից պակաս սպառում՝ մեկ բնակչի հաշվով)⁷ 2022 թ. աղքատ է համարվել Հայաստանի բնակչության 51,3%-ը: Սա նշանակում է, որ Հայաստանի բնակչության կեսն աղքատության մեջ է⁸: Այս ցուցանիշը կրկնակի ավելի է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների աղքատության միջին մակարդակից (2022 թ.՝ 24%): Համեմատության համար նշենք, որ եթե 2021 թ. Վրաստանում գրանցված աղքատության մակարդակը գերազանցում էր Հայաստանի նույն ցուցանիշը, ապա 2022 թ. արդեն Հայաստանն աղքատ բնակչության տեսակարար կշռով առաջ է անցել Վրաստանից (գծապատկեր 2):


Համաշխարհային բանկը Հայաստանի Հանրապետությունում աղքատության ցուցանիշի ցածր առաձգականությունը տնտեսական աճի նկատմամբ մասնակիորեն բացատրում էր նրանով, որ մասնավոր սպառումը կազմել է ՀՆԱ աճի միայն մոտ մեկ երրորդը: Չնայած աղքատ տնային տնտեսությունների եկամուտների աճի

⁵ Աղբյուր՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC?locations=AM-XT-XN-XM-XD>

⁶ Աղբյուր՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 31-32, https://arm-stat.am/file/article/poverty_2024_a_2.pdf

⁷ Հարկ է նշել, որ 2025 թվականի ապրիլի դրությամբ ցածր եկամուտ ունեցող երկրների դեպքում ծայրահեղ աղքատությունը գնահատելիս, որպես աղքատության միջազգային գիծ, սահմանված է 2,15 ԱՄՆ դոլարը (ԳՀ 2017), իսկ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների համար՝ 3,65 ԱՄՆ դոլարը (ԳՀ 2017):

⁸ 2025 թվականի ապրիլի դրությամբ աղքատության ցուցանիշը հաշվարկվել է 2017 թվականի գնողունակության համարժեքով: Հայաստանի պարագայում Համադրությունների միջազգային ծրագրի կողմից իրապարակված գործակիցը կազմել է 167.312 (ԳՀ 2017):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Տնային տնտեսությունների անվանական դրամական եկամուտներն ըստ դեցիլային խմբերի, մեկ շնչի հաշվով՝ միջին ամսական, ՀՀ դրամ, 2006-2023 թթ.⁹

տեմպը գերազանցում էր ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների աճի տեմպը՝ դա բավարար չէր աղքատության շեմը հաղթահարելու համար¹⁰։ Ըստ այդմ՝ տնտեսական աճի «պտուղները» չափազանց անհամաչափորեն են բաշխվել սոցիալական տարբեր խմբերի միջև, և աղքատ բնակչությունն ավելի քիչ չափով է օգտվել դրանցից։ Ասվածն ավելի ակնհայտ է դառնում բնակչության դեցիլային խմբերի¹¹ անվանական դրամական եկամուտների շարժընթացի ուսումնասիրությունից։ Գծապատկեր 3-ից երևում է, որ սոցիալական տարբեր խմբերի միջև եկամուտների տարբերությունը շարունակաբար խորացել է՝ նվազեցնելով սոցիալական շարժունակությունը։ Այսպես՝ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար ավելի քիչ հավանական է եղել բնակչության միջին կամ բարձր

եկամտային խմբում հայտնվելը¹²։ Բացասական է համարվում նաև այն հանգամանքը, որ 2023 թվականին առաջին վեց դեցիլային խմբերի միջին ամսական եկամուտների մակարդակը ցածր է եղել նվազագույն ամսական աշխատավարձի մեծությունից՝ 75000 ՀՀ դրամից¹³։

Պատկերը նույնական է նաև ըստ քվինտիլային խմբերի տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի։ Բնակչության քվինտիլային խմբերի ծախսերի աճին զուգահեռ, ընդլայնվել է նաև նրանց միջև առկա ճեղքվածքը (գծապատկեր 4)։ Խնդրահարույց է այն հանգամանքը, որ 1-4 քվինտիլային խմբերի անվանական սպառողական ծախսերի մակարդակը ցածր է նվազագույն սպառողական զամբյուղից։

Պատկերը նույնական է նաև ըստ քվինտիլային խմբերի¹⁴ տնային տնտեսություն-

⁹ Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2006-2023 թթ.։ ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=82&id=1202>, <https://armstat.am/am/?nid=82&id=2529>, <https://armstat.am/am/?nid=82&id=2617>, <https://armstat.am/am/?nid=82&id=2699>


¹⁰ Աղբյուրը՝ Poverty and Equality Brief, Europe and Central Asia, Armenia, October 2024, page 1, https://databankfiles.worldbank.org/public/ddpext_download/poverty/987B9C90-CB9F-4D93-AE8C-750588BF00QA/current/Global_POVEQ_ARM.pdf

¹¹ Դեցիլային խմբերի դեպքում բնակչությունը բաժանվում է տասը հավասար մասի (յուրաքանչյուրը՝ 10%), առաջին դեցիլում են ամենացածր եկամուտ ունեցող 10%-ը, իսկ տասներորդ դեցիլում՝ ամենաբարձր եկամուտ ունեցող 10%-ը։

¹² Աղբյուրը՝ Խաչատրյան Ա. (2023), Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, «Տնտեսություն և հասարակություն», ՀՊՏՀ, «Տնտեսագետ», 3 (3), էջ 84, DOI: 10.52174/29538114_2023.3-69

¹³ Աղբյուրը՝ ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 2022 թ. դեկտեմբերի 7, <https://www.arlis.am/>

¹⁴ Քվինտիլային խմբերի դեպքում բնակչությունը բաժանվում է հինգ հավասար հատվածների (յուրաքանչյուրն ընդգրկում է 20%)։ Առաջին քվինտիլում են ամենաքիչ ծախսեր կատարող 20%-ը, իսկ հինգերորդ քվինտիլում՝ ամենաշատ ծախսեր կատարող 20%-ը։



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4



Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերն ըստ քվինտիլային խմբերի, մեկ շնչի հաշվով՝ միջին ամսական, ՀՀ դրամ, 2006-2023 թթ.¹⁵

ների անվանական սպառողական ծախսերի: Բնակչության քվինտիլային խմբերի ծախսերի աճին զուգահեռ, ընդլայնվել է նաև նրանց միջև առկա ճեղքվածքը (գծապատկեր 4): Խնդրահարույց է այն հանգամանքը, որ 1-4 քվինտիլային խմբերի անվանական սպառողական ծախսերի մակարդակը ցածր է նվազագույն սպառողական զամբյուղից:

Սոցիալական անհավասարությունն ակնհայտ է դառնում, երբ դիտարկում ենք աղքատության ցուցանիշներն ըստ բնակավայրերի: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ գյուղական բնակավայրերում՝ կազմելով 27%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2% (գծապատկեր 5): Դրական է համարվում, որ քաղաքային և գյուղական բնակավայրերի աղքատության մակարդակների միջև տարբերությունը նշանակալիորեն կրճատվել է՝ 2020 թ. 11.1%-ից 2023 թ.-ին նվազելով 1,8%-ի: Սակայն, ծայրահեղ աղքատության մակարդակի առումով, գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև տարբերու-

թյունը նկատելիորեն մեծացել է՝ 2020 թ. 0,8%-ից հասնելով 1,5%-ի¹⁶:


Աղքատության խորության և սրության ցուցանիշները ևս գյուղական բնակավայրերում նկատելիորեն բարձր են և կրկնակի գերազանցում են քաղաքային բնակավայրերի նույնանման ցուցանիշները: Այսպես՝ 2023 թվականին գյուղական բնակավայրերի աղքատության սրության ցուցանիշը, որը բնութագրում է աղքատների միջև եղած անհավասարությունը, առավել բարձր է՝ կազմելով 1,7%:

Ինչ վերաբերում է աղքատության խորության ցուցանիշին, ապա գյուղական բնակավայրերում դա կազմել է 5,5%՝ 1,8%-ով գերազանցելով քաղաքային բնակավայրերի նույնանուն ցուցանիշը: Սա ցույց է տալիս, որ գյուղերում բնակվող աղքատների միջին եկամուտը կամ սպառումը շարունակում է աղքատության գծից ավելի ցածր մնալ, ըստ այդմ՝ աղքատությունից դուրս գալու համար գյուղերում բնակվող աղքատին անհրաժեշտ են աղքատության գծի 5.5%-ին համարժեք ռեսուրսներ¹⁷:

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStat-Bank_2%20Population%20and%20social%20processes_25%20Households/PS-hh-1-2022.px/table/tableViewLayout2?rx-id=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

¹⁶ Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf, Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 34, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.p

¹⁷ Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 41, https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf




ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Աղքատության ցուցանիշներն ըստ բնակավայրերի, 2023 թ.¹⁸

Եվ քաղաքային, և գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի ցուցանիշը զգալիորեն է երեխաների թվի նկատմամբ: Երեխաների թվի ավելացումը սահմանափակում է նյութական և ոչ նյութական բարիքների հասանելիությունը: Այսպես՝ 3 և ավելի երեխա ունեցող (43.2%) տնային տնտեսությունների աղքատության մակարդակը կրկնակի գերազանցում է երեխա չունեցող տնային տնտեսությունների նույնատիպ ցուցանիշը (19.7%)

(գծապատկեր 6):

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը նախորդ տարվա 56,8%-ից 2023 թ.-ին աճել է մինչև 58,3%: Ընդ որում, գյուղական բնակավայրերում այս ցուցանիշը հասնում է 66,3%-ի, որտեղ անհամեմատ մեծ բաժին են կազմում գյուղացիական տնտեսությունում ինքնազբաղվածները (31,6%) (աղյուսակ 1): Վերջիններս, զբաղված լի-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Աղքատության մակարդակն ըստ երեխաների (մինչև 6 տարեկան) թվաքանակի, 2023 թ.¹⁹

¹⁸ Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 34-36, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf

¹⁹ Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ., էջ 42, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Աղքատությունն ըստ աշխատուժի մասնակցության (15-75 տարեկան բնակչություն), 2023 թ.²⁰

Աշխատուժի մասնակցությունը	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով՝ 15-75 տ. աղքատների մեջ
Ընդհանուր բնակչությունից			
Աշխատուժ	0.7	21.6	66.0
Զբաղվածներ	0.7	20.7	58.3
Ինքնազբաղվածներ	1.1	21.7	19.3
ք. Երևան			
Աշխատուժ	0.1	15.5	61.0
Զբաղվածներ	0.1	16.8	50.7
Ինքնազբաղվածներ	0.0	12.0	5.5
ՀՀ այլ քաղաքներ			
Աշխատուժ	0.7	23.5	63.5
Զբաղվածներ	0.7	22.4	52.6
Ինքնազբաղվածներ	1.7	25.9	12.0
Գյուղական բնակավայրեր			
Աշխատուժ	1.2	23.4	70.3
Զբաղվածներ	1.0	22.9	66.3
Վարձու աշխատողներ	1.1	21.6	26.3
Ինքնազբաղվածներ	1.1	22.5	31.6

ներով հանդերձ, բավարար եկամուտ չեն ստանում իրենց նյութական և ոչ նյութական կարիքները հոգալու համար:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում տնտեսական իրավիճակի բարելավումը չի թուլացրել սոցիալական լարվածությունը: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը հնարավորություն չի տալիս առավել ցածր եկամուտ ունեցող բնակչությանը մասնակից դառնալու տնտեսական կյանքի աշխուժացմանը և օգտվելու եկամուտների վերաբաշխումից: Ավելին, միջինից բարձր եկամուտ ունեցող բնակչության կեսը կուտակված է աղքատության վերին գծին մոտ, ինչը տնտեսական ցնցումների պարագայում աղքատության մեջ հայտնվելու ռիսկեր է առաջացնում: Աղքատության տեսանկյունից, առավել խոցելի են հատկապես երեք և ավելի (մինչև 6 տարեկան) երեխա ունեցող ընտանիքները (43.2%): Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ անհամեմատ մեծ տեսակարար կշիռ ունեն զբաղվածները (58,3%):

Ընդհանուր առմամբ, թեև որոշ ցուցանիշների առումով առկա են դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ, խորքային և կառուցվածքային հիմնախնդիրները, այդ թվում՝ արմատացած սոցիալական բևեռացվածությունը սահմանափակում են աղքատության կրճատմանն ուղղված քաղաքականության նպատակայնությունն ու արդյունավետությունը: Ու թեպետ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել բազմաբնույթ միջոցառումների և ծրագրերի կենսագործմանը, որոնք ուղղված են ծայրահեղ աղքատության վերացմանը²¹, աղքատության մակարդակի կրճատմանը²², մարդկային կապիտալի զարգացմանը, ներառական տնտեսական աճի ապահովմանը, սակայն դրանց օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ դրանք ցանկալի են՝ երկարաժամկետ հատվածում կայուն զարգացման նպատակների ապահովման տեսանկյունից: Այս առումով, աղքատության կրճատմանն ուղղված քաղաքականության հասցեականության մակարդակը բարձրացնելու

²⁰ Աղբյուրը՝ Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 45, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf

²¹ Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, էջ 67, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

²² Աղբյուրը՝ Զբաղվածության 2025-2031 թթ. ռազմավարական ծրագիր, էջ 31, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVAB-CCC9-B9BB-9A7C/2083.1.pdf

և առաջադրված թիրախներին հասնելու համար ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի համապարփակ վերանայման, կառուցակարգերի հստակեցման և առաջնահերթությունների ճշգրտման անհրաժեշտություն է առաջանում, որին ավելի մանրամասն կանդիդատական ընտանք մեր հետագա ուսումնասիրություններում:

գրքում և անհրաժեշտություն է առաջանում, որին ավելի մանրամասն կանդիդատական ընտանք մեր հետագա ուսումնասիրություններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
2. Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf
3. Աղքատության պատկերը Հայաստանում 2020-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/poverty_2024_a_2.pdf
4. Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիր, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV-AB-CCC9-B9BB-9A7C/2083.1.pdf
5. Խաչատրյան Ա. (2023), Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, «Տնտեսություն և հասարակություն», ՀՊՏՀ, «Տնտեսագետ», 3 (3), էջ 84, DOI: 10.52174/29538114_2023.3-69
6. Կայուն զարգացման նպատակներ: Միավորված ազգերի կազմակերպություն Հայաստան, <https://armenia.un.org/hy/sdgs/1>
7. Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>
8. Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC?locations=AM-XT-XN-XM-XD>
9. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2006-2023 թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=82&id=1202>, <https://armstat.am/am/?nid=82&id=2529>, <https://armstat.am/am/?nid=82&id=2617>, <https://armstat.am/am/?nid=82&id=2699>
10. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/Arm-StatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__25%20Households/PS-hh-1-2022.px/table/tableViewLayout2/?rx-id=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
11. ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 2022 թ. դեկտեմբերի 7, <https://www.arlis.am/>
12. Poverty and Equality Brief, Europe and Central Asia, Armenia, October 2024, https://databankfiles.worldbank.org/public/ddpept_download/poverty/987B9C90-CB9F-4D93-AE8C-750588BF00QA/current/Global_POVEQ_ARM.pdf

Ани ХАЧАТРЯН

Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

НАСТОРАЖИВАЮЩАЯ СИТУАЦИЯ С БЕДНОСТЬЮ

Одной из важнейших целей устойчивого экономического развития является обеспечение доступа к материальным и нематериальным ресурсам для различных слоев населения, особенно для уязвимых групп. В этом контексте целевая политика по борьбе с бедностью требует всестороннего анализа конечных результатов, что имеет ключевое значение для выявления недостатков проводимой политики, пересмотра инструментария борьбы с бедностью, уточнения приоритетов и выявления возможностей для углубления политики. В статье предпринята попытка провести подобный анализ на основе ключевых показателей, характеризующих уровень бедности. Проведенный анализ показывает, что доходы распределяются неравномерно между различными группами

населения, а социальная поляризация препятствует бедным слоям населения воспользоваться плодами экономического роста. Увеличение количества детей и членов семьи ограничивает доступ к материальным ресурсам. Более того, даже будучи трудоустроенными, бедные слои населения не могут преодолеть черту бедности и удовлетворить свои базовые потребности.

Ключевые слова: *уровень бедности, неравенство доходов, социальная поляризация, черта бедности*

Ani KHACHATRYAN

*Expert-scientific researcher at «Amberd» Research center, ASUE,
PhD in Economics*

SOCIAL POLICY

A WORRISOME PICTURE OF POVERTY

One of the key objectives of sustainable economic development is to ensure access to both material and non-material resources for various population groups, particularly vulnerable segments. In this context, a targeted policy aimed at poverty reduction requires a comprehensive evaluation of its outcomes, which is crucial for identifying policy gaps, revising tools, clarifying priorities, and uncovering opportunities for policy enhancement. This article attempts to conduct such an analysis based on key indicators of poverty. The analysis reveals that income distribution is highly unequal across different population groups, and social polarization prevents the poor from benefiting from economic growth. Moreover, an increase in the number of children and family members limits access to material resources. Even employed individuals in the poor population often fail to meet their essential needs.

Keywords: *poverty level, income inequality, social polarization, poverty line*